

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2013 թվականի N 1489-Ն

ԾԵՐՈՒԹՅԱՆ, ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅԱՆ, ԿԵՐԱԿՐՈՂԻՆ ԿՈՐՑՆԵԼՈՒ
ԴԵՊՔՈՒՄ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԵՎ ԹԱՂՄԱՆ ՆՊԱՍՏԻ ՉԱՓԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(վերնագիրը փոփ. 25.12.14 N 1499-Ն)

Համաձայն «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ և 35-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**։

1. Սահմանել՝

1) ծերության նպաստի չափը՝ 16000 դրամ.

2) հաշմանդամության նպաստի չափերը՝

ա. առաջին խմբի հաշմանդամի և հաշմանդամ երեխա ճանաչված անձի համար՝ 21500 դրամ,

բ. երկրորդ խմբի հաշմանդամի համար՝ 19000 դրամ,

գ. երրորդ խմբի հաշմանդամի համար՝ 16000 դրամ.

3) կերակրողին կորցնելու դեպքում նպաստի չափը՝ 16000 դրամ, իսկ երկու ծնողին կորցրած՝ 18 տարին չլրացած երեխայի (կամ առկա ցերեկային ուսուցմամբ սովորող զավակի) դեպքում՝ 80 000 դրամ.

4) «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով սահմանված թաղման նպաստի չափը՝ 200000 դրամ:

(1-ին կետը փոփ. 25.12.14 N 1499-Ն)

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2014 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

S. Սարգսյան

2013 թ. դեկտեմբերի 27

Երևան